ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ IX ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

(Երևան, 11—13 մայիսի, 1971)

Բյուզանդագիտությունը մեր երկրում ունի շատ խոր արմատներ, սակայն 1920—1960-ական թթ. այդ մասնաճյուղը, ինչ-ինչ պատճառներով, որպես ինքնուրույն գիտություն, գրեթե վերացել էր։ Պատերազմից հետո բյուզանդագիտությունը սկսում է նորից զարգանալ և այժմ պատկանում է ընդհանուր պատմության այն ճյուղերի թվին, որոնք լայն ճանաչում ունեն ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Պետք է շեշտել, որ բյուզանդագիտության աշխարհագրությունը այժմ լայնացել է և Լենինգրադից ու Մոսկվայից բացի, բյուզանդագետներ են աշխատում Սվերդլովսկում, Երևանում, Թբիլիսիում և այլուր։ Այդ մասնագետների միմյանց հետ հաղորդակցվելու ձգտումը գնալով աճում է։ Լենինգրադի նստաշրջանը գումարվել է 1958 թ., Թբիլիսիինը՝ 1965 թ., Սվերդլովսկինը՝ 1969 թ., իսկ Երևանինը՝ 1971 թ.։ Պատահական չէ, որ հերթական հանդիպման համար ընտրվել էր Երևանը։ Հայագիտությունը սերտորեն կապված է բյուզանդագիտության հետ ինչպես սկզբնաղբյուր հանդիսացող նյութերով, այնպես էլ մեթոդիկայով. ի դեպ, բյուզանդագիտության առանձնահատկություններից մեկն այն է, որ այդ մասնաճյուղի սահմանները գնալով լայնանում են և հաճախ դժվար է որոշակի սահմանագիծ դնել բյուզանդագիտության և արևելագիտության ու սլավոնագիտության միջև։ Հայաստանը սերտ հարաբերությունների մեջ է եղել Բյուզանդիայի հետ, դարեր շարունակ իր տարածության որոշ մասերով եղել է Բյուզանդական կայսրության կազմում։ Բյուզանդական մշակույթի ազդեցությունը հայկական մշակույթի վրա անհնարին է գերագնահատել։ Եթե այս ամենին ավելացնենք, որ վերջին տարիների ընթացքում Հայաստանը կրթել է իր սեփական կադրերը, որոնք տարբեր գիտական հաստատություններում մասնագիտորեն զբաղվում են բյուզանդագիտությամբ կամ հարակից հարցերով, ապա պարզ կլինի, որ նստաշրջանի գումարումը Երևանում միանգամայն արդարացված էր։

Հայ մասնագետներից բացի նստաշրջանին մասնակցել են մի քանի տասնյակ գիտնականներ Լենինգրադից, Մոսկվայից, Սվերդլովսկից, Թբիլիսիից, Բաքվից, Կալինինից, Վոլգոգրադից, Կաղանից։ Տեղի է ունեցել երկու պլենար և 14 սեկցիոն նիստ, ընդ որում աշխատել են 4 սեկցիա՝ պատմության ու իրավունքի պատմության, հասարակական մտքի պատմության ու գրականագիտության, աղբյուրագիտության ու օժանդակ գիտությունների, հնագիտության, ճարտարապետության և արվեստի պատմության։ Ընթերցվել է ավելի քան 70 զեկուցում։

Նստաշրջանի գլխավոր թեման էր բյուզանդական ֆեոդալիզմի ծագումն ու էությունը։ Այդ հարցին էին նվիրել իրենց ելույթները Զ. Վ. Ուդալցովան (Մոսկվա) և Մ. Յա. Սյուզյումովը (Սվերդլովսկ)։ Բյուզանդական քաղաքը խոշոր դեր է կատարել ֆեոդալիզմի զարգացման ընթացքում. այդ մասին հաղորդեցին Ռ. Լ. Կուրբատովը և Բ. Ֆ. Ֆիխմանը։ Ա. Պ. Կաժդանը (Մոսկվա) զեկուցեց տիրող դասակարգի ձևավորման մասին X—XII դդ., քննության առնելով այդ շրջանի հատկապես տոհմաբանական հարցերը։ Այս թեման կարևոր է նաև հայագիտության համար, քանի որ բյուզանդական բազմաթիվ մեծատոհմիկներ ունեցել են հայկական ծագում։ Ս. Տ. Երեմյանը (Երևան) խոսեց Բյուզանդիայի դերի մասին՝ հայկական ֆեոդալիզմի զարգացման ընթացքում, իսկ Վ. Ռ. Կորոլյուկը (Մոսկվա) արծարծեց նման հարցեր կենտրոնական և հարավ-արևելյան Եվրոպայի վերաբերյալ։

Ինչպես և նախորդ նստաշրջաններում, Երևանի նստաշրջանում մեծ տեղ է հատկացվել Բյուզանդիայի կապերին հարևան ժողովուրդների հետ։ Ադվանքի ու Ադրբեջանի և Բյուզանդիայի առևտրական կապերի մասին խոսեցին Ն. Գուլիևը և Ա. Ռաֆարլին (Բաքու)։ Մ. Մ. Ֆրբեյդենբերգի (Կալինին) ելույթը նվիրված էր դալմատական քաղաքին՝ Բյուզանդական կայսրության կազմում։ Բյուզանդիայի և սելջուկների փոխհարաբերությունների մասին հաղորդեց Ռ. Ա. Հուսեյնովը (Բաքու)։ Ս. Դ. Ղաուխչի-

շվիլին (Թբիլիսի) կոնկրետ նյութի վրա ցույց տվեց, թե ինչպես էր շաղկապվում Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի քաղաքական ձգտումների հետ։ Արաբա-բյուզանդական հարաբերությունների մասին խոսեց Ա. Տեր-Ղևոնդյանը, իսկ Վ. Ա. Արուտյունովան (Երևան) վերլուծեց Փիլարտոս Վարաժնունու քաղաքականությունը Բյուզանդիայի և Հարևան ժողովուրդների նկատմամբ։

Նստաշրջանի ծրագրում մեծ տեղ էին գրավում գրականագիտական ելույթները, որոնց մեծամասնությունը նվիրված էր անտիկ գրական ժառանգությանը՝ բյուզանդական գրականության մեջ, ինչպես նաև բյուզանդական գրականության առանձնահատկություններին (Տ. Ա. Միլլեր, Տ. Վ. Պոպովա, Ս. Ս. Ավերինցև՝ Մոսկվա, Մ. Ա. Պոլյակովսկայա՝ Սվերդլովսկ, Հ. Մ. Բարթիկյան՝ Երևան, Ս. Վ. Պոլյակովա, Յա. Ն. Լյուբարսկի՝ Լենինգրադ և մյուսներ)։

Բազմազան ելույթներ նվիրվեցին արվեստի պատմությանը՝ ճարտարապետությանը (Ա. Լ. Յակոբսոն՝ Լենինգրադ, Ս. Խ. Մնացականյան՝ Երևան, Ա. Ի. Կոմեչ՝ Մոսկվա), մանրանկարչությանը (Տ. Ա. Իդմայլովա, Վ. Դ. Լիխաչովա՝ Լենինգրադ, Լ. Զ. Ջաքարյան՝ Երևան, Գ. Ի. Վզդորնով՝ Մոսկվա), որմնանկարչությանը (Բ. Ն. Առաքելյան, Լ. Ռ. Ազարյան՝ Երևան, Օ. Ս. Պոպովա՝ Մոսկվա), արծաթագործությանը (Ա. Վ. Բանկ, Ա. Յա. Կակովկին՝ Լենինգրադ)։

Բազմական էր աղբյուրագիտության և օժանդակ գիտությունների սեկցիայի ծրագիրը։ Թարմ նյութ մատուցեցին Ի. Վ. Սոկոլովան և Վ. Ս. Շանդրովսկայան (Լենինգրադ). վերջինս վերլուծության ենթարկեց էրմիտաժում պահվող կնիքներից այն օրինակները, որոնք պատկանելիս են եղել հայկական ծագում ունեցող բյուզանդական պատմական մի շարք անձնավորությունների։ Ա. Ռ. Աբրահամյանը խոսեց Անդրեաս Բյուզանդացու տոմարական աղյուսակների մասին, իսկ Պ. Մ. Մուրադյանը ծանոթացրեց ունկնդիրներին իր՝ Ագաթանգեղոսի վերաբերյալ կատարված աղբյուրագիտական պրպտումների արդյունքներին։ Ն. Կ. Թահմիզյանի զեկուցումը նվիրված էր վաղ միջնադարյան հայ-բյուզանդական երաժշտական կապերի բնութագրմանը։ Ասորա-հռոմեական դատաստանագրքի մասին խոսեց Ն. Ա. Թորոսյանը (բոլորը՝ Երևան)։

Մի շարք ելույթներ կարևոր ինֆորմացիա էին պարունակում ձեռագրական հավաքածուների մասին (Ք. Է. Երանստրեմ, որը դժբախտաբար, ի վիճակի չէր ժամանելու Երևան, Զ. Գ. Սամոդուրով, Բ. Լ. Ֆոնկիչ, Յա. Ն. Շչապով՝ Մոսկվա)։ Լ. Ս. Միմինոշվիլին (Թբիլիսի) զեկուցեց հունա-վրացական բառարանի կազմության մասին, «Византийский Временник»-ի պատասխանատու քարտուղար Ռ. Ա. Նասլեդովան (Մոսկվա) ներկայացրեց այդ պարբերականի վիճակը վերջին տասը տարվա ընթացքում, իսկ Կ. Ա. Օսիպովան (Մոսկվա) խոսեց բյուզանդագիտության հարցերի քննարկման մասին՝ պատմաբանների XIII համաշխարհային համագումարում, որը տեղի է ունեցել Մոսկվայում 1970 թ. օգոստոսին և ունեցել է նաև բյուզանդագիտության մասնաճյուղ։

Ծրագրային նիստում բոլոր ելույթ ունեցողները միաձայն շնորհեցին Երևանի նստաշրջանի բարձր գիտական մակարդակը։ Նստաշրջանի մասնակիցները հնարավորություն ունեցան այցելելու մի շարք պատմական հուշարձաններ. կազմակերպված էր հայ միջնադարյան երաժշտության գեղեցիկ համերգ։ Հայագիտության համար սույն նստաշրջանը ամենից առաջ ուշագրավ էր գիտական առումով. Երևանից ելույթ ունեցան 12 գիտնական (ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտից, հնագիտության և ազգագրության ինստիտուտից, արվեստի պատմության ինստիտուտից, Մաշտոցի անվան Մատենադարանից, պետհամալսարանի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնից)։ Ելույթները նվիրված էին մեծ մասամբ հայ-բյուզանդական պատմամշակութային կապերին։ Այդ զեկուցումները մեկ անգամ ևս բացահայտեցին հայկական նյութերի կարևորությունը բյուզանդագիտական խնդիրներ լուծելիս։ Համոզված կարելի է ասել, որ Երևանի ներկայացուցիչների ելույթները համապատասխան էին այն ընդհանուր բարձր մակարդակին, որ հատուկ էր անցած նստաշրջանին։ Այդ հանգամանքը ինքնին գալիս է ասելու, որ Երևանում բյուզանդագիտությունը արմատակալվել է և ունի զարգացման լայն հեռանկարներ։ Սակայն, միաժամանակ, պետք է նշել, որ Երևանի գիտնականների զեկուցումները, ճնշող մեծամասնությամբ, հիմնված էին հայկական նյութի, հայալեզու աղբյուրների վրա։ Եթե յուրաքանչյուր առանձին վերցրած դեպքում այդպիսի «միակողմանիությունը» արդարացված է այս կամ այն զեկուցման բնույթով, ապա ընդհանուր առմամբ դա տեղի է տալիս որոշ անհանգստության, քանի որ բյուզանդագիտության ապագան Հայաստանում պայմանավորված է լինելու հիմնականում հունա-լատինական աղբյուրների ուսումնասիրությամբ։

Կ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ
(Լենինգրադ)